




Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

368.5

7-11

41175-ակ  
2802-10

Հաստատում եմ  
Ֆինիստգլոմ Գ. Հաննոզլյան  
10 ապրիլի 1932 թ.

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՅՐԱՅԱՆԳ

Գյուղատնտեսական մշակույթների կարկտահարությունից հասած վնասները գնահատելու մասին

§ 1. Վորպես ընդհանուր կանոն, գյուղատնտեսական մշակույթների կարկտահարությունից հասած վնասների գնահատումը պետք է կատարել լուծարքողը (ապտեսուչը և գյուղատնտեսը) :

Լուծարքողը պետք է ունենա գյուղատնտեսական մասնագիտություն (գյուղատնտես) կամ նա պետք է լինի աշխարհի անձնավորություն, վորը փորձով ծանոթ է դաշտամշակութայն հետ :

Այդ նկատառումներով չրջանային գործկոմները պարտավոր են պատրաստել իր ժամանակին լուծարքողների փորձված կազմը՝ նրանց տրամադրություն տակ գտնվող գյուղատնտեսներից կամ այլ աշխատակիցներից (պետապի տեսուչներից), վորոնց վրա դրվելու յն ապահովագրական կարգով վնասները գնահատելու աշխատանքը :

§ 2. Շրջանային գործկոմների գյուղատնտեսները և ֆինանսական մարմինների ապահովագրական այլ պատասխանատու աշխատակիցները, վորոնց փորձով ծանոթ են վնասները գնահատելու կարգի հետ, իրենց պաշտոնական գործուղումների ընթացքում պարտավոր են գյուղերում հրահանգելու գյուղիտրահորդներին՝ նրանց անկիւնների մասին :

Նրանց վրա դրվում է նույնպես հրահանգչական աշխատանքները՝ վնասները գնահատելու նկատմամբ :

Գյուղատնտեսներն անձկագծի խորհրդակցությունների ժամանակ պարտավոր են հանդես գալ գեկուցումներով այդ խնդրի շուրջը : Վերջապես նրանք պարտավոր են տեղական գնահատող հանձնաժողովի ներկայությամբ կատարել ցուցադրական լուծարքներ :

§ 3. Վնասների գնահատությունը կատարվում է ծրագրված ձևով : Ծրագրում ցույց է տրվում ինչպիսի տեղում, վոր ժամանակում

և Եվ ե կատարելու վնասների գնահատությունը: Ծրարները կազմվում են աշխատի հաշվով, վորպեսզի վնասները լուծարվի յենթարկելուց առաջ, յուրաքանչյուր լուծարող իմանա այն վայրը (չրջանը), վորտեղ նա պետք է աշխատի այդ դեով:

§ 4. Վորպես ընդհանուր կանոն, վնասների գնահատությունը պետք է կատարի պետապի տեսուչը՝ գյուղատնտեսի մասնակցությամբ: Նրանցից յուրաքանչյուրը կրում է հետևյալ պարտականությունները՝

Ապտեսուչը պարտավոր է՝

- ա) ստուգել ապահովագրական փաստաթղթերը.
- բ) հաշվարկել ապահովագրման վարձատրությունը չափը.
- գ) կազմել լուծարված աշխատի և ձեռքերի աշխատի և ձեռքերի աշխատի:
- Գյուղատնտեսը պարտավոր է՝
- ա) վորոշել կարկտահարությունից վնասված տարածությունները.
- բ) վորոշել հասած վնասի իրական չափը (տոկոսները).
- գ) հավաքել անհրաժեշտ տեղեկություններ՝ ստուգված դաշտի գրություն մասին.

դ) հայտարարել անբերրիության պատճառները, ինչպես և պարզել այն պատճառները, վորոնց հետևանքով ապահովագրվողը չի պահպանել ագրոմիլիումը:

§ 5. Յեթե վնասների գնահատությունը կատարում է մեկ անձնավորություն՝ գյուղատնտեսը կամ ապտեսուչը, այս հրահանգի § 4-ի թված աշխատանքները կիրառում է այդ անձնավորությունը:

§ 6. Բացի ապտեսուչից և գյուղատնտեսից, վնասների գնահատմանը մասնակցում են՝

- ա) տուժած ապահովագրվողները, կամ լիազորված անձնավորությունները, վորոնք ընտրվում են այդ նպատակով ապահովագրվողների կողմից.
- բ) գյուղխորհրդի նախագահը.
- գ) գյուղական ակտիվի և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

§ 7. Գյուղատնտեսությունների վնասները գնահատելու ժամանակ մասնակցում են՝

- ա) ապտեսուչը, գյուղատնտեսը կամ չրջանային գործկոմի ուրիշ մասնագետը.
- բ) կոլտնտեսության վարչության ներկայացուցիչը (վարչության նախագահը կամ տեղակալը).
- գ) կոլտնտեսության գյուղատնտեսը կամ ուրիշ համապատասխան մասնագետը: Վերջինին նշանակում է կոլտնտեսության վարչությունը.
- դ) գյուղական ակտիվի ներկայացուցիչը:

§ 8. Մասսայական կարկտահարության դեպքում, յերբ վնասների գնահատությունը պետք է կատարվի ամենակարճ ժամանակամիջոցում,

չրջանային գործկոմները կազմակերպում են հատուկ լուծարված հանձնաժողովներ, վորոնց կազմը և գործունեությունը կարգը սահմանվում է չրջգործկոմի կողմից:

ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Շտապ և համառաքած լուծարք

§ 9. Վնասների լուծարքը կատարվում է շտապ կարգով, կամ ընդհանուր վոչ շտապ կարգով:

Շտապ լուծարքը կատարվում է հետևյալ դեպքերում՝

- ա) յերբ բույսերը վերջնականորեն վոչնչացված են կամ խիստ վնասված են կարկտահարությունից և նրանց տեղը պետք է կատարվի նոր ցանք: Այդ դեպքում պետք է հաշվի առնել վերամշակության հնարավորությունները և այն, թե վորքա՞ն հնարավոր է տվյալ ժամանակում կատարել կրկնացան:
- բ) յերբ կարկտահարությունը տեղի յե ունեցել բերքահավաքի սկսելու ժամանակ կամ բերքահավաքի ընթացքում.
- գ) յերբ կարկտահարությունից վնասվել են գյուղատնտեսական հատուկ ճյուղերը ծաղկելու ժամանակ (պտղատու այգիներ, լիաղողի այգիներ և այլն):

Շտապ լուծարքը կատարվում է յերեք ուրվա ընթացքում՝ հաշվելով այն կարկտահարության մասին տեղեկություն ստանալու ժամանակից: Վնասված գյուղատնտեսական մշակույթներն ստուգելուց հետո, լուծարողը կարող է հրաժարվել շտապ լուծարք կատարելուց, յեթե նա դա այն համոզման, վոր մինչև բերքի հասնելը բույսը կարող է վերականգնել (լավանալ):

Շտապ լուծարքը կարող է կատարվել ապտեսուչի նախաձեռնությամբ միայն այն դեպքում, յերբ նա պարզի, վոր շտապ գնահատությունը կպակասեցնի վնասի չափը:

§ 10. Բոլոր այլ դեպքերում վնասների լուծարքումը կատարվում է վոչ շտապ, ըստ վորում, վորպես կանոն, այդ լուծարքը հացահատիկային բույսերի նկատմամբ կատարվում է հացահատիկի լցվելու (հասնելու), նրա վերջնականապես հասնելու ժամանակամիջոցում, ոակայն վոչ շուտ, քան բերքահավաքից յերկու շաբաթ առաջ:

Գյուղատնտեսական հատուկ կամ տեխնիկական մշակույթների վնասների գնահատությունը պետք է կատարել բերքահավաքից մոտավորպես յերկու շաբաթ առաջ: Ժամանակի վորոշելը կախված է մշակույթների հասունությունից:

Ծանոթություն 1.— Հացահատիկային բույսերի լուծարքը մինչև հացահատիկի լցվելը կարող է կատարվել միայն այն դեպքում:

բում, յերբ կարկտահարությունը տեղի յե ունեցել մինչև բույսի ծաղկելը (բեղմնավորումը): Այդպիսի կարկտահարության վնասները պետք է լուծարքի յենթարկեն գյուղատնտեսները:

Ծանոթություն 2.— Գյուղատնտեսական հատուկ մշակութիւնների, մանավանդ թելավոր և յուղարույսերի լուծարքը պետք է կատարվի ըստ կարելւոյն այդ մշակութիւնների մասնագետների մասնակցութեամբ:

Ծանոթություն 3.— Յեթե աշնանային կամ գարնանային մշակութիւնները հասնում են միաժամանակ, այդ դեպքում նրանց լուծարքը կարելի յե կատարել միատեղ:

### ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 11. Ապահովագրական փաստաթղթերը (ցուցակները) ստուգվում են այն նպատակներով, վորպեսզի վորոշել՝ համապատասխանում են արդյոք նրանց մեջ ղեռնկալած տեղեկութիւններն այն իրական տվյալներին, վորպիսիք հայտնաբերված են դաշտը ղեռնկալու (զննելու) ժամանակ:

Առանձին ուղադրութիւն պետք է դարձնել յուրաքանչյուր գյուղատնտեսական մշակութիւն տեսակի տարածութիւնի չափերի վրա:

### 3. ԴԱՇՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ (դիտում)

§ 12. Վնասված բույսերի դաշտային քննութիւնը կազմում է լուծարքային աշխատանքների ամենակարևոր և էական մասը: Այդ միջոցով միայն հնարավոր է ունենալ անհրաժեշտ տեղեկութիւններ իրական վնասների մասին:

Դաշտային քննութիւնն այդ իսկ պատճառով պետք է կատարել մանրագնին և տալ որոշակի յեզրակացութիւն:

Դաշտային քննութիւն ժամանակ լուծարքողը պարզում է՝

ա) կարկտահարութիւնի փաստը:

բ) տարերային աղետից վնասված տարածութիւնը:

գ) վնասի ինտենսիվութիւնը (կարկտի ուժը), ցանքի կարկտահարված մասը:

դ) մետերիոլոգիական այն յերևույթները, վորոնք ուղեկցել են կարկտահարութիւնը:

յե) այն վնասը, վոր պատճառել են վնասատուները, կամ հիվանդութիւնները, կամ տարերային այլ աղետները (բացի կարկտահարութիւնից), վորոնք վերջին հաշվով նպաստել են բերքաւորութիւնի պակասելուն:

զ) տվյալ դաշտի կամ առանձին մշակութիւնների միջին մշտական բերքաւորութիւնը, յեթե տեղի չունենար կարկտահարութիւն:

§ 13. Յերբ կարկտահարութիւնի փաստը հնարավոր էի վորոշել հարցաքննութիւնի միջոցով, ապա այդ դեպքում լուծարքողն այդպիսին պարզում է ստուգել բույսերի ողնութիւնը, վորոնց վրա պետք է լինեն այդպես կոչված՝ կարկտային կիսամոխրագոյն-կիսապիտակ կամ մուգ մոխրագոյն բծեր:

Այդ բծերն ընդհանրապես տեղաւորվում են բույսի ճյուղերի ստորին մասերում: Կարկտային բծերը պետք է վորոշել մոլախոտերում, վորոնք յերկար ժամանակ պահպանում են իրենց վրա կարկտի հարվածների հետքերը:

Յեթե բույսերի վրա կարկտահարութիւնի բծեր չկան, ապա կարկտահարութիւնի փաստը համարվում է անորոշ և այդ մասին կադմվում է արձանագրութիւն՝ կարկտահարութիւն տեղի չունենալու մասին:

Ծանոթություն.— Ստուգել բույսերի ողնութիւնը պետք է ղեռնկալել նաև այն դեպքերում, յերբ կարկտահարութիւնի փաստն ակնհայտ է, սակայն ղեզվար յե վորոշել կարկտի ուժը: Կարկտային բծերի մեծութեամբ և քանակով կարելի յե դատել կարկտի ուժի մասին:

§ 14. Կարկտահարութիւնից տուժած տարածութիւնը պետք է վորոշել ըստ կարելւոյն ճիշտ և հնարավոր միջոցներով, այն է՝

ա) ոգտագործել հողային պլանների այն տարածութիւնները, վորոնք չեն կորցրել իրենց տնտեսական նշանակութիւնը:

բ) ոգտագործել դոյութիւն ունեցող սահմանները:

գ) կարկտահարված դաշտամասերի սահմանային դծերը պետք է չափել ուղեկալով կամ ժապավենով:

§ 15. Յուրաքանչյուր ապահովագրվողի վնասված ցանքերի ղեռնումը (քննութիւնը) պետք է կատարել առանձին (անհատական լուծարք): Վնասված տարածութիւնի չափը պետք է վորոշել նույնպես ըստ տնտեսութիւնների:

Լուծարքողը պարտավոր է փաստացի ստուգման յենթարկել վնասված ապահովագրվողների անվանացուցակը և ցույց տալ կարկտահարված յուրաքանչյուր շերտի տարածութիւնը:

§ 16. Կարկտահարութիւնի հասցրած վնասի չափը (առտիճանը) կախված է կարկտի առատութիւնից և հարվածելու ուժից: Դա կոչվում է ինտենսիվութիւն (լարվածութիւն):

Ինտենսիվութիւնի առտիճանը վորոշվում է բերքաւորութիւնի այն տեղագրով, վորը կարող եր լինել, յեթե տեղի չունենար կարկտահարութիւնը:

Գյուղատնտեսական հացահատիկային բույսերի ինտենսիվութիւնը վորոշելու համար ղերադասելի յե համեմատութիւն դնել կարկտահարված և վոչ կարկտահարված հողամասերի բերքը: Այդ իսկ պատճառով կարկտահարութիւնի հասցրած վնասի տոկոսը վորոշելիս ցանկալի յե

կատարել վորձնական բերքահավաք, կախելով դաշտի վորոշ մասի հացահատիկը (մոտավորապես 5-10 քառ. մետր տարածութիւն) :

Այդ աշխատանքը պետք է կատարել, յերբ այդ հնարավոր է կատարել և յերբ լուծարքի համար սահմանված ժամանակը թույլ է տալիս այդ անելու, ինչպես և բոլոր այն դեպքերում, յերբ լուծարքող տարակուսում կամ կասկածում է վնասի չափի մասին :

Կախելու համար վորձնական հացահատիկ ընտրելու ժամանակ պետք է պահպանել բոլոր անհրաժեշտ այն պայմանները, վորոնք թույլ են տալիս համեմատութիւն կատարել, այն է՝ համեմատութիւն դրութիւն հողերի միեւնոյն տեսակը, մշակութիւնը, պարարտանյութերի միջակայութիւնը, սերմի միեւնոյն քանակը, ցանքի կատարելու ժամանակը և այլն :

Կախելու համար վորոշված վորձնական հողամասերը պետք է ունենան համասար տարածութիւն :

Այդ նպատակով ավելի հարմար է վերցնել 10 քառ. մետր տարածութիւն ունեցող հողամասեր : Այս դեպքում 10 քառ. մետր տարածութիւն բերքը կիրառամենքով տալիս է մեկ հեկտար բերքը ցնանների հաշիւով :

§ 17. Յերբ կատարվելիք լուծարքային աշխատանքների ծավալը և մինչև ընդհանուր բերքահավաքը մնացած ժամանակամիջոցի կարճատեւութիւնը հնարավորութիւն չեն տալիս բավականին լայն չափերով վորձնական կախում կիրառելու, այդ դեպքում վնասները վորոշելու նպատակով առաջարկվում է հետևյալ հասարակ ձևը : Կարկտահարութիւնից վնասված և չվնասված վորք տարածութիւնների վրա (որինակ՝ մեկ քառ. մետր) պետք է հաշվել հացահատիկի հասկերը, փշերը (տրորել) ձևերով, համարել կամ կշռել ստացված հատիկը : Յերկու հողամասերի ստացված արդշունքի տարբերութիւնն այս դեպքում դառնում է կարկտահարութիւն հասցրած վնասի ցուցանիշը :

Այլ հասարակ ձևերի կիրառումը վնասները վորոշելու համար, ինչպես որինակ՝ հողի վրա թափված հատիկների խտութիւնը հաշիւելը, վնասված հասկերի տոկոսային հարաբերութիւնը տվյալ հողամասում յեղած հասկերի ընդհանուր քանակի նկատմամբ, թույլատրվում է միայն այն անձանց, վորոնք ունեն անցյալ տարիների կարկտահարութիւն վնասների լուծարքի վորձնաութիւն :

§ 18. Վաղ կարկտահարութիւն ուժը վորոշվում է վնասված բույսերի և վորձնական հողամասի բույսերի ընդհանուր քանակի տոկոսային հարաբերութիւնով : Այս դեպքում պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, վոր գյուղատնտեսական մշակութիւնները, վորոնք վնասվել են իրենց աճման սկզբնական շրջանում, որինակ՝ մինչև ծաղկելը (բեղմնավորումը), հետագայում, բարեհաջող պայմանների առկայութիւն պարագներում, շուտով առողջանում և նորմալ բերք են տալիս :

Լուծարքողը պետք է հաշիւի առնի նաև հանդամանքը, վոր արտերի ցրտահարութիւն, խոնավութիւնից փչանալու, կամ յերաշտի դեպքերը, վորոնք առաջացնում են կրկնացանի անհրաժեշտութիւն, ապահովագրվողը կարող է ոգտագործել վորպես տնիթ, ոգտվելով հանդամանքից կատարելու շտապ լուծարք՝ լրիվ ապահովագրական վարձատրութիւն ստանալու համար, կարկտահարութիւն հիմունքներով :

Այսպիսի դեպքերում լուծարքողը պարտավոր է՝ վնասների տոկոսը վորոշելիս անպայման հաշիւի առնել բոլոր այն պայմանները, վորոնք առաջագրել են կրկնացանի անհրաժեշտութիւն և տարբերել կարկտահարութիւն վնասներն այլ տարբերային աղետներից հասած վնասից :

§ 19. Յերբմի կարկտահարութիւնը բնականորեն նորացնում է խիտ ցանքերը և դրանով իսկ բարձրացնում է բերքատուութիւնը, վորովհետև մնացած հացահատիկային բույսերն ավելի լավ են դարդաւում : Նման դեպքերում չի կարելի կատարել լուծարք : Գերադասելի յի լուծարքը ձևակերպել բույսերի լրիվ հասունութիւն ժամանակ :

§ 20. Կարկտահարված դաշտի դիտումը (դննութիւնը) պետք է սկսել այնպիսի հողամասից, վորն ամենից շատ է վնասվել և այդտեղից անցնել համեմատաբար քիչ վնասված հողամասերը դիտելուն :

Պատճառած աղետի չափը վորոշելու դժվարութիւնը նկատի ունենալով, կոպարային ապահովագրման վնասների լուծարքի ժամանակ առաջարկվում է ղեկավարվել հնգապատիկ տոկոսների սխտեմով (5 տոկոս, 10 տոկոս, 15 տոկոս և այլն մինչև 100 տոկոս) :

§ 21. Գանի վոր առանձին բույսերի դիմացկունութիւնը կարկտի հարվածների տարբեր է և կախված է վոչ միայն բույսի տեսակից, այդ պատճառով վնասի տոկոսը պետք է վորոշել յուրաքանչյուր գյուղատնտեսական բույսի համար առանձին :

Յեթե ապահովագրվողի միատեսակ բույսերը դտնվում են դանադան հողամասերում, ապա կարկտահարութիւն ինտենսիվութիւնն այդ մշակութիւնների նկատմամբ վորոշվում են այն հողամասերի միջին ինտենսիվութիւնով, վորտեղ այդ մշակութիւնները ցանված են :

Որինակ՝ քաղ. Հարութիւնյանի առաջին հողամասում վնասվել է 0,5 հեկտար ցորենի ցանք՝ 30 տոկոսով, իսկ յերկրորդ հողամասում նոյն մշակութիւնից 2 հեկտարը՝ 25 տոկոսով :

$$0,5 \times 30 = 15$$

$$2 \times 25 = 50$$

$$\text{Ընդամենը՝ } 2,5 - \text{հեկտարը} = 65$$

Գաղ. Հարութիւնյանի ցորենից վնասը համասար է՝

$$65 : 2,5 = 26 \text{ տոկոսի :}$$

§ 22. Յեթե տվյալ հողամասն ապահովագրման շրջանում կարկտահար է յեղել մի քանի անգամ, այն ժամանակ ինտենսիվութիւնը վոր

բողոքում և կարկտահարութեան բոլոր դեպքերից հասած ընդհանուր վնասների համեմատ, բայց լուծարքային արձանագրութեան մեջ ցույց և տրվում յուրաքանչյուր կարկտահարութեան առանձին պատահարը: Որինակ՝ Գատարյան կարկտահարի ցորենը, կարկտահարվել և հունիսի 25-ին և դյուղատնտեսը վնասի չափը վորոշել և 40 տոկոս: Հուլիսի 25-ին նորից կարկտահարվել և, վորից ցորենը վնասվել և ընդամենը 50 տոկոս, ուրեմն վնասը պետք և հաշվել ընդամենը 50 տոկոս, այլ վոչ թե դումարել 40 տոկոս և 50 տոկոս:

§ 23. Վորպեսզի վորոշել միջին իրական բերքը, վորը կարող ևր ստանալ ապահովագրվողը, յեթե չլիներ կարկտահարութեան դեպքը, անհրաժեշտ և հաշվի առնել նաև բերքի իջեցումն այլ բնական պատահարներից: Սովորաբար մեծ նշանակություն են ունենում սառնամանիքները, թացությունը, յերաշտը, միջոտ-վնասատուները և այլն:

Բույսերը վնասվում են նույնպես վնասատու-կրծող կենդանիների կողմից (մկներից և այլն): Հաճախ բույսերը հիվանդանում են ժանդով, սունկային հիվանդութուններով և այլն: Այն պատճառները, վորոնց հետևանքով իջնում և բերքն, արձանագրվում են:

§ 24. Բերքատվությունը պակասեցնող բոլոր տեսակի տվյալների հաշվառման հիման վրա լուծարքային ընդհանուր լուծարքը կատարելու ժամանակ պարտավոր և վորոշել դյուղի միջին բերքի քանակը, վորը կարող և ստացվել, յեթե տեղի չունենար կարկտահարութիւնը: Միջին բերքի քանակը կարելի յի վորոշել կարկտահարութիւնից չվնասված ցանքերի միջոցով:

Անտանային և դարձանային մշակույթների նկատմամբ ստացված տվյալները դրանցվում են դաշտային մատյանում:

### ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

§ 25. Դաշտերի դիտումից (զննությունից) հետո, լուծարքովը վորոշում և կարկտահարութեան պատճառած իրական վնասի չափը:

Իրական վնասը վորոշվում և հետևյալ ձևով՝

Յենթադրենք, վոր տնտեսությունը 1932 թ. ապահովագրել և 2,5 հեկտար առաջին տեսակի բուսական մշակույթներ, վորից կարկտահարվել և 1,2 հեկտար ցորեն՝ 40 տոկոսով և 0,8 հեկտար դարձ՝ 30 տոկոսով:

Այդ մշակույթների մեկն մեկ հեկտարը կողարային կարգով ապահովագրված և 55 ուրբի, հետևապես, յեթե այդ վնասը լիներ 100 տոկոս, ապա ապահովագրվողը կստանար՝

ա) 1,2 հեկտար ցորենի համար  $66 \text{ ուրբի } (1,2 \times 55 = 66):$

բ) 0,8 հեկտար դարձ համար  $44 \text{ ուրբի } (0,8 \times 55 = 44):$

Բայց վորովհետև ցորենը վնասված և 40 տոկոսով, իսկ դարձն՝ 30 տոկոսով, ապա վնասը կկազմի՝

Ցորեն  $66 \times 40 = 26 \text{ ուրբ. } 40 \text{ կոպ.}:$

Դարձ  $44 \times 30 = 13 \text{ ուրբ. } 20 \text{ կոպ.}:$

Ապահովագրական վարձատրությունը, վորպես ընդհանուր կանոն, չի կարող ավելի լինել կոպարային ապահովագրման գումարից և բերքի իրական արժեքից:

Ապահովագրական վարձատրությունը հաշվարկվում և հետևյալ ձևով՝

§ 26. Յեթե կարկտահարութեան հետևանքով վնասված հողամասում կատարվում և կրկնացան, այդ դեպքում ապահովագրման վարձատրություն չի վճարվում, այլ հատուցվում են միայն կրկնացանի հետ կապված ծախքերը:

Ծախքերի մեջ մտնում են՝

ա) վարելահողի լրացուցիչ մշակելու արժեքը.

բ) կարկտահարված քերմի արժեքը:

Սակայն ծախքերի ամբողջ գումարը չի կարող ավելի լինել, քան բույսերի ապահովագրական նորմայի 50 տոկոսը, իսկ բամբակի նկատմամբ՝ նորմայի 20 տոկոսից վոչ ավելի (տես հրահանգի § 13):

ԼՈՒԾԱՐՔԱՅԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 27. Փաստաթղթերի ստուգման և վնասների գնահատման ընթացքում ստուգված բոլոր տեղեկությունները մտցվում են լուծարքային արձանագրութեան մեջ:

Յուրաքանչյուր բնակավայրի կամ կոլտնտեսության համար կազմվում և առանձին լուծարքային արձանագրություն:

Արձանագրության մեջ մտցվում են այն բոլոր տեղեկությունները, վորոնք պահանջվում են սույն արձանագրության ձևով: Լուծարքային արձանագրության բոլոր սյունյակները պետք և լրացվեն և բոլոր հարցերին պետք և տրվի ճիշտ պատասխան:

Յեթե վորեւ սյունակի տվյալները չկան, ապա սյունակը պետք և դնել:

§ 28. Կարկտահարությունից վնասված այն ապահովագրվողները, վորոնք դյուղական ցուցակներում չեն դրված, նույնպես մտցվում են լուծարքային արձանագրության մեջ և նրանց նկատմամբ արձանագրության վերջում արվում և նշանակում՝ ցուցակում չգրանցելու պատճառների մասին:

Լուծարքային արձանագրությունը կազմելուց հետո, ստորագրվում և լուծարքին մատնակցող բոլոր անձանց կողմից:

կարկտահարութեան փաստը, լուծարքային արձանագրութեան մեջ կարկտահարութեանը բոլոր վնասվածքների գրանցումը, ինչպես և վերահսկող անձանց ստորագրութեանը վավերացումը և դրույթորհարգը:

Լուծարքային արձանագրութեանը վերջնականորեն ձևակերպելուց հետո, անհապաղ ներկայացվում է շրջանային ֆինրատին:

Լուծարքային արձանագրութեանը հաստատվում են շրջանային գործկոմի կողմից և ստուգվում են ֆինոդկոմտախ տեսուչների կողմից:

Հատուկ մշակույթների դիտումն ու գնահատումը.

§ 29. Կարկտահարված հատուկ մշակույթները (խաղողի այգիները, պտղատու այգիները, ծխախոտի և բամբակի ցանքերը), վորոնք վնասվել են ծաղկելու (բեղմնավորման) շրջանում, պետք է դիտվեն (գննվեն) աղետի մասին տեղեկությունն ստանալուց հետո վոչ ուշ, քան յերեք օրվա ընթացքում՝ մասնագետների մասնակցությամբ:

Տուգողների հարցաքննության միջոցով պետք է պարզել՝

ա) կարկտահարության ժամանակը.

բ) մշակույթի ծաղկման սկիզբը:

Վնասված բույսերի դիտումի միջոցով վորոշվում է՝

ա) մնացած ծաղկիների կամ ծառի բողբոջների քանակը՝ հարված քստացած ծաղկիների կամ բողբոջների համեմատությամբ.

բ) վորքան նորմալ է ընթանում ծաղկումը (բեղմնավորումը) և ծառերի բողբոջների դարգացումը.

գ) վորքան են վնասված ծառի կոկոնները, ծաղկակերներով (միջատներով) կամ ուրիշ վնասատուներով:

Դիտումի արդյունքների մասին կազմվում է առանձին արձանագրություն, վորի հիման վրա բերքահավաքից առաջ, վնասների լուծարքը կատարելիս, հնարավոր է ավելի ճշտորեն վորոշել կարկտահարության վնասը:

§ 30. Վնասների լուծարքը կատարվում է բերքահավաքից յերկու շաբաթ առաջ: Հիմնական այն սկզբունքները, վորոնք մասնաշված են այս հրահանգի «գաշտային քննության» հատվածում, կիրառվում և պահպանվում են նաև հատուկ մշակույթների նկատմամբ:

§ 31. Յերբ պտղատու այգիները կարկտահարութեանից վնասված են յեղել ծաղկելուց (բեղմնավորումից) հետո, անհրաժեշտ է պարզել՝ կատարվե՞լ է արդյոք բողբոջների առատություն հետևանքով բերքի նորմայացում (нормировка урожая)

Բացի այդ պտղատու այգիների վնասների լուծարքի ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, վոր կարկտահարութեանը պտուղների առանձին տեսակների վրա աղդում է տարբեր չափով: Ուրինակ՝ Հասած խնձորն ավելի յե վնասվում, քան տանձը, իսկ հասած

ժամանակ կարկտահարութեանը թողնում է հակառակ հետևանքներ: Սպիտակ կաշի (չապիկ) ունեցող պտուղներն ավելի չատ են կորցնում, իրենց օրոժեքը, քան գունավոր չապիկ ունեցող պտուղները:

§ 32. Պտղատու այգիների, թփերի և խաղողի այգիների ապահովագրական վնասները պետք է լուծարքի յենթարկել միայն այն դեպքերում, յեթե աղետը (կարկտահարութեանը) տեղի յե ունեցել ծառերի կամ թփերի ծաղկելու ժամանակ, կամ ծաղկելուց հետո:

Ծաղկելուց առաջ հասած վնասների համար ապահովագրական վարձատրություն չի տրվում: Այդ իսկ պատճառով կարկտահարութեան ակտում պետք է նշել կարկտահարութեան նիշտ ժամանակը, շեշտելով այդ մոմենտը:

§ 33. Պտուղների առանձին տեսակի դեղերի դանապանության պատճառով, սպասած բերքը վորոշելիս, պետք է պարզել յուրաքանչյուր տեսակի բերքի տոկոսն ամբողջ աստորտիմենտի նկատմամբ: Նույնպես և պարզել ինքնին թափվող պտուղների նորմալ քանակը, յեթե չլինեք կարկտահարություն:

Վնասները վորոշելիս պարզել հետևյալը՝

ա) քանակական վնասը վորոշելիս լուծարքողը պետք է ուշադրություն դարձնի այն պտուղների վրա, վորոնք թափվել են կարկտահարության պատճառով միայն, չհաշվելով աղետից առաջ թափված պտուղները (կարկտի հետքեր չունեցող պտուղները):

Գնահակական վնասը վորոշելիս, պետք է նկատի ունենալ և այն, թե վորքան կարող եք ծառն իր վրա պահել պտուղներ մինչև նրանց հասնելը, կարկտահարությանից առաջ:

Հաճախ կարկտաղը վայր է դրում ալիւրդ այն պտուղները, վորոնց ծառը պահում է դժվարությամբ և վորոնք հետագայում թափվում են նաև առանց կարկտի:

բ) Բերքի վորահակական վնասը կարկտահարությանից վորոշելիս, լուծարքողը պետք է պարզի.

Պտուղների վրա թողնված բծերը և տրամատիկ (վերքային) հետևանքներ, պտուղների մեծությունը, աղդեցությունը՝ պահվող պտուղների վրա:

Բերքի վորակի իջեցումը վորոշելու ժամանակ չպետք է չիտթել կարկտահարության պատճառած վերքերն այլ տեսակի վերքերի հետ (կնճռավոր բզկիների ծակոցների հետ և այլն):

Վաղ կարկտահարությանից հետո պտուղներն ընդհանրապես առողջանում են և ստացվում է վոչ առաջին տեսակի բերք, սակայն պտուղները չեն անպետքանում, կամ թե անպետքանումների քանակը լինում է չնչին:

Եթաև այն մասը, վորտեղից փչել է քամին և նրա վերել մասի վնասները լինում են ավելի ուժեղ, քան մյուս մասերում:

Բերքի վորակի իջեցման հետևանքով առաջին տեսակի ապրանքն իր արժեքն ավելի շատ է կորցնում:

Այգիների վնասը պետք է վորոշել առանձին տեսակի ծառերի ճյուղերի պտուղները հաշվելու միջոցով այգու զանազան մասերում, ինչպես և պարզել չվնասված պտուղների տոկոսային հարաբերությունն այն պտուղներին նկատմամբ, վորոնք կարկտահարություն պատճառով դարձել են յերկրորդ, յերրորդ տեսակի պտուղներ կամ անպետքացի են (բրակ):

Կարկտահարության հետևանքով անպետքացած պտուղների տոկոսը վորոշելիս պետք է հանել սովորական նորմալ անպետքացման տոկոսը, վորն այս կամ այն ձևով պետք է լինի՝ անկախ կարկտահարությունից:

Վորոշել առանձին տեսակի պտուղներին միջին դներն ըստ Մաս-ժողովման կողմից սահմանած սակագների, նույնպես և պարզել անպետքացած պտուղների արժեքը (վերջինների վորակի համեմատ):

Պտուղների առանձին տեսակների դներն հիման վրա վորոշվում է վնասի չափը:

§ 34. Համաձայն դուրս բերված պտուղների միջին դների վորոշվում է վնասված բերքի արժեքը, նույնպես և սոյապիլիք բերքի մոտավոր արժեքը, յեթե չլինի կարկտահարություն:

Այդ յերկու գումարի տարբերությունը կլինի կարկտահարության վնասը:

Ապահովագրական վարձատրությունը հաշվարկվում է լրիվ վնասի գումարի չափով, յեթե ապահովագրումարն ամբողջ բերքի իրական արժեքից պակաս է: Իսկ յեթե ապահովագրումարի չափը բերքի իրական արժեքից պակաս է, այդ դեպքում ապահովագրական վարձատրությունը հաշվարկվում է միայն վնասի համապատասխան չափով:

Որինակ՝ վնասված բերքն արժե 75 ռուբլի, իսկ յեթե կարկտահարություն չլինի, այդ բերքը կարժենար 100 ռուբլի, ուրեմն ընդհանուր վնասը հավասար է 25 ռուբլու: Յեթե ապահովագրումարը (ապահովագրական նորման), բաղմապատկելով վնասված տարածության վրա, ոտանում ենք վնչ պակաս ապահովագրումարից, այսինքն՝ 100 ռուբլուց, այդ դեպքում ապահովագրական վարձատրությունը տրվում է 25 ռուբլու չափով, իսկ յեթե ապահովագրումարը 100 ռուբլուց պակաս է, այսինքն՝ հավասար է որինակ՝ իրական արժեքի կիսին (50 ռուբլու), ապահովագրական վարձատրությունը հաշվարկվում է վնասի կիսի չափով, այսինքն՝ 12 ռ. 50 կ.:

§ 35. Կարկտահարված խաղողի այգին դիտելու ժամանակ լուծարողը կարկտահարության վնասները պարզելու հետ զուգընթացաբար հայտնաբերում է նաև վաղերի հիվանդության պատճառները, յեթե այդպիսիք նկատվեն:

Ապահովագրման պատասխանատվությունը վերանում է հետևյալ տեսակի հիվանդությունների սովորական դեպքերում՝ բույսի սննդի ֆունկցիոնալ խանգարումը, բեղմնավորման ժառանգական դեֆեկտների, սառնամանիքների ազդեցության, սնկային հիվանդությունների — ֆիլոկտերի, այլ վնասատուների և ամենատարրական խնամքի բացակայության դեպքերում, վորոնց հետևանքով խաղողի այգին բերք չի տալիս:

Վնասների դնահատման ընթացքում, բացի վերոհիշյալ մոմենտներից, պետք է պարզել.

ա) կարկտահարության ժամանակը, նշելով, թե ծաղկումից առաջ և յեղել կարկտահարությունը, թե՞ ծաղկումից հետո.

բ) կարկտահարված տարածությունը հեկտարներով.

գ) խաղողի թփերի քանակն ըստ տեսակների և հասակի (ապահովագրողի հայտարարությամբ):

Այս տեղեկություններն ստուգվում են միջնակներում (ալիյի) թվերի քանակը հաշվելու միջոցով:

դ) թփերի ընդհանուր քանակի վոր ստիտան է յենթակա պնտություն (դիտումի):

Այս դեպքում, ուղիղ զուգահեռ տնկաբաններում դնահատման համար ստուգիչ թփերը դերադասելի յե վերցնել յուրաքանչյուր 10-15 մետր հեռավորության վրա, յեթե խաղողի թփերը ձողերի վրա յեն, ապա պետք է վերցնել 10-15 մետր հեռավորության վրա դանդաղ յուրաքանչյուր թուփը: Ստուգիչ թփերի հեռավորությունը մեկը մյուսից (ինանկվալ մետրերով) վորոշելիս, պետք է նկատի ունենալ կարկտահարության միապաղաղությունը և ինտենսիվությունը:

յե) յուրաքանչյուր ստուգիչ թփից պետք է կտրել (3-5) կարկտահարված խաղողի ճիթեր (վողկույղներ): Կտրված ճիթերն իրենց մեծությունը չպետք է լինեն միատեսակ (մեծ, միջակ և փոքր).

զ) կտրված ճիթերը կշռել ըստ խաղողի տեսակների.

ը) վորոշել վնասի կոեֆիցիենտը (դործակից) առաջին և յերկրորդ կշիռների տարբերության համեմատ.

թ) պարզել մթերող մարմինների կողմից սահմանած խաղողի տնանձին տեսակների դները:

Այս ալյաքների հիման վրա պետք է վորոշել վնասի չափը և ապահովագրական վարձատրությունը:

Խաղողի վորակի իջեցումը վորոշվում է դինեգործարանների յեղած ստանդարտներով, յեթե վերջինների կողմից սահմանված են դեղձեր՝ կարկտահարված այգիներից ստացված խաղողի համար:

Վնասի դնահատման փաստացի ստուգումը կարելի յի կատարել դինեգործարանը հանձնած վնասված և չվնասված ալյաքների խաղողը համեմատություն դնելու միջոցով:

Այդ տվյալների հիման վրա վորոշվում է ապահովագրական վարձատրության չափը:

Ծանոթություն.— Խաղողի բերքը հավաքում են աստիճանաբար ըստ նրանց տեխնիկական հասունության, այդ պատճառով ել վնասի հաշվարկը կատարելու ժամանակ պետք է նկատի ունենալ բերքի նվազումը և յեղնել բերքի համապատասխան կերպով նվազված չափից:

§ 36. Ծխախոտի պլանտացիաներում վնասները վորոշելու աշխատանքը բաժանվում է յերկու մասերի, նայած կարկտահարության ժամանակին:

ա) յերբ կարկտահարությունը տեղի յե ունեցել սածիլները դաշտ տեղափոխելու մոմենտից մինչև ստորին գոտու տերևների զարգանալը:

բ) յերբ կարկտահարությունը տեղի յե ունեցել հետագա ժամանակահատվածում, սկսած ստորին գոտու վերևում յերկրորդ տերևները յերևալուց մինչև բույսի լրիվ տեխնիկական հասունությունը: Այդ ձևով հացրված վնասները լուծարքման ժամանակ տարբեր հետևանքներ են տալիս:

Բույսի աճման առաջին շրջանում կարկտը կարող է վնասել ստորին մասի տերևները, վերին մասի բողբոջները և բույսի ցողը:

Այդ վնասների յուրաքանչյուր տեսակը տալիս է տարբեր արդյունք, վնասների դնահատման նկատմամբ: Ստորին տերևներին կարկտահարությունը չի առաջացնում ապահովագրման վնաս, վորովհետև առողջ բույսը, յեթե նա վերափորված չէ վնասատուների կողմից, չուսում առողջանում և նոր տերևներով են փոխարինվում հները:

Նույն ձևով, յերբ կարկտահարվում է վերին մասի բողբոջները, բույսը դուրս է գցում ցողից նոր ճյուղ և հետագայում նորմալ կերպով զարգանում է: Կարկտահարված կողերով բույսերը պետք է փոխարինվեն նոր սածիլներով, յեթե ժամանակը ներում է կա սածիլների պաշար:

Վնասի դնահատումը կատարվում է փորձնական հողամասերի վրա գտնվող այն հաշվառման միջոցով, վորոնք պահանջում են նորացում և փոխարինում նոր սածիլներով: Այնուհետև փորձնական հողամասում հաշվի յե առնվում ցողերի ընդհանուր քանակը, դուրս է բերվում փչացած բույսերի տոկոսը և դրա հիման վրա հաշվարկվում է ցանք-օա-տիրոջ ծախսի այն դումարը, վորը անհրաժեշտ է փչացած բույսերի վերականգնելու համար:

Սածիլների արժեքը, տնկելու և ջրելու աշխատանքի արժեքը, ինչպես և նորացման արժեքը լուծարքողը պարտավոր է պարզել տեղում, կամ ստանալ այդ տեղեկությունները փորձնական կոոպերատիվ հաստատությունից, վորը կապված է տվյալ վայրի ծխախոտագործության հետ:

Այդ դեպքում ապահովագրման վարձատրությունը վճարելու ժամանակ փաստաթղթերում արվում են նշանակումներ վճարված դումարի մասին: Ապահովագրման վարձատրությունը իջեցվում է վճարած դումարի չափով:

Յեթե կարկտահարությունը տեղի յե ունեցել այնպիսի ժամանակահատվածում, վոր պլանտացիայի վերականգնումը նոր սածիլների միջոցով անհնարին է, այդ դեպքում լուծարքողը պարտավոր է պարզել՝

ա) ծխախոտի ինչպիսի տեսակն է կարկտահարվել (սամսոն, տրապիզունդ և այլն) .

բ) ծխախոտի յուրաքանչյուր գոտու տերևների տեղական անվանումը և այդ տերևների կյանքի կացության ըստ տեսակների .

գ) Մթերող մարմինների կողմից սահմանված մթերման դները ըստ ծխախոտի տեսակների .

դ) վեղետացիոն շրջանում յեղած քաղի քանակը մինչև կարկտահարության տեղի ունենալը .

յե) ներքին ստորին տերևների պարանքային նշանակությունը (քաղում են արդյոք տերևները, անպետքացած են այդ տերևները կամ վերամշակվում են դրանք ցածր տեսակի ծխախոտ պատրաստելու համար, թե վոչ) :

զ) տվյալ պլանտացիայի ծխախոտի երապրոտային կամ ներքին սղառման նշանակությունը, ծխախոտի նշանակություն համեմատ կատարվում է տերևների տեսակավորումը:

Դաշտային դիտումի ժամանակ ստուգվում են ստացված տեղեկությունները և պարզվում է, թե վորքան է վնասված յեղել ծխախոտի թուփը վարակիչ հիվանդություններով (վորակող, ցեց, մարմարի հիվանդություն, ծխախոտի պեպելիցիա), վորոնք համար ֆինժողկոմատը պատասխանատու չի, ինչպես և պարզվում է վորքան են ազդել այն հիվանդությունները ծխախոտի վրա և իջեցրել նրա վորակը (տես սակը) :

Նույն միջոցով պարզվում է նաև այն, թե վնասված են յեղել արդյոք ծխախոտի թիկերը և ձողը միջատների կողմից, վորպիսի վնասների համար ֆինժողկոմատը նմանապես պատասխանատու չէ:

Յեթե ծխախոտի պլանտացիաները գտնվում են մի քանի հողամասերում, այդ դեպքում պետք է դիտել (գնել) բոլոր հողամասերը: Վնասները և ծխախոտի վորակի իջեցման փաստը պարզվում է ստուգիչ հողամասերում:

Արժատի վրա ծխախոտի վնասների դնահատման ժամանակ, անհրաժեշտ է կանաչ տերևների մասսայի կշիռը (փորձնական տերևների) դարձնել կիտահում նյութի կշիռ: Այդ նպատակով թարմ-կանաչ տերևների քաղը պետք է պակասեցնել միջին հաշվով 80%-ով, վորովհետև ծխախոտի տերևները պարունակում են 78 տոկոս ջուր և բացի

այդ տերեւները կորցնում են 4 տոկոս չոր նյութեր չորացման ժամանակ:

Ծխախոտի յուրաքանչյուր տեսակը պետք է կշռել առանձին: Պարզելով առանձին տեսակների կշիռը և դրանցից յուրաքանչյուրի արժեքը կարկտահարությունից հետո, լուծարքողը համեմատում և ստացված տվյալները մինչև կարկտահարությունը յեղած քաշի և արժեքի հետ և տարբերության հիման վրա վորոշում է վնասի չափը:

§ 37. Դեղին ծխախոտի կարկտահարությունից և անբերրիությունից ապահովագրման դեպքում լուծարքողը պարտավոր է այդ յերկու տեսակի ապահովագրության վնասների դնահատումը կատարել միաժամանակ, պահպանելով հետևյալ պայմանները՝

ա) յուրաքանչյուր կարկտահարության դեպքից հետո, (յեթե վնասակար չլինի չորանում յեղել և կարկտահարության մի քանի դեպքեր) լուծարքողը կազմում է միայն մի արձանագրություն դաշտը դիտելու մասին, անշեղ կիրառելով այս հրահանգում վնասների չափը վորոշելու վերաբերյալ մատնանշված կարգը:

բ) յեթե կարկտահարությունից տուժած ապահովագրույնքը հայտնում են նաև ծխախոտի անբերրիության մասին, այդ դեպքում կարկտի վնասները դիտելու նկատմամբ կազմված լուծարքային արձանագրության մեջ կատարվում է նշումներ անբերրիության մասին: Այդ արձանագրությունը դառնում է հիմք յերկու տեսակի վնասները լուծարքի յենթադիելու համար:

գ) Յեթե ընդհանրապես կարկտահարությունից հետո ստացվի հարտարություն ծխախոտի անբերրիության մասին, նախնական դիտումի նկատմամբ կազմած արձանագրությունը ծառայեցվում է վորոշես նյութ ընդհանուր լուծարքային արձանագրության կազմելու համար, վորի հիման վրա վորոշվում է կարկտահարության և թե անբերրիության վնասները:

Այն դեպքում, յերբ ծխախոտի ցանքը կարկտահարվում է 100 տոկոսով վնասը համարվում է վորպես անբերրիության, վորովհետև նման տեսակի ապահովագրման համար պատասխանատվությունը պայմանավորվում է քանակով, իսկ կարկտահարության ապահովագրումը վորակով:

Կարկտահարված ծխախոտի տերեւները գրեթե վաշինչ չեն կորցնում իրենց քաշում: Այս դեպքում պահառում է միայն ծխախոտի արժեքը, նրա վորակը իջնելու պատճառով:

Ծխախոտի վորակի իջեցումը առաջացնում է դեբի տարբերություն, վորպիսին հիմք է ծառայում ապահովագրման վարձատրությունը վորոշելու համար: Անբերրիությունից ապահովագրության դեպքում վնասը վորոշվում է ծխախոտի թերահավաքի ամբողջ քանակի նկատմամբ առանց տեսակների բաժանելու և ապահովագրական վար-

ձառությունը տրվում է թերահավաքի արժեքի չափով հաշվելով մթերման կայուն դեբերով:

դ) Վնասների ճիշտ վորոշելու համար, վորպես ստուգիչ տվյալներ կարող են ծառայել պետական և կոոպերատիվ մթերող մարմինների գեղին ծխախոտի մթերման փաստաթղթերը:

յե) Անհայտ լավ բերքի ժամանակ, յերբ հայտարարություններ անբերրիության մասին չեն լինում, կարկտահարության վնասների համար տրվող վարձատրությունը կարող է վճարվել միայն վերջին տերեւները հավաքելուց հետո (վերջին քաղից հետո):

ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՈՒՑԹԻ ՎՆԱՍԻ ՎՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ  
ԱՆԲԵՐՐԻՈՒԹՅՈՒՆԻՑ

§ 38. Համաձայն ՀՍՍՀ Ժորկովորհի 1931 թ. հունիսի 30-ի վորոշման Հայաստանում պարտադիր կոպարային կարգով անբերրիությունից ապահովագրվում է բամբակի ցանքը:

1. Ապահովագրական նորմաները (չափը) անբերրիությունից մեկ հեկտարի համար սահմանված է՝

ա) կոլտնտեսություններում — 5,6 ցենտներ:

բ) անհատական տնտեսություններում — 4,3 ցենտներ, (այս ժողկոմիորհի 1931 թ. ոգոստոսի մեկի չորաբերականը):

Եթե բամբակի ցանքի բերքը պակաս յեղավ հիշված չափերից (քանակից), այդ դեպքում Ֆինոդկոմատը վճարում է ցանքատերերին տարբերության (պակասորդի) արժեքի դումարով, հաշված մատթողկոմատի մթերման կայուն դեբերով, լայց վոչ ավել 28 ուրբ. 57 կոպ. յուրաքանչյուր պակաս ցենտների համար կոլտնտեսություններում և 27 ուրբ. 90 կոպ. անհատական տնտեսություններում:

Ծանոթություն.— Բամբակի վորակի համար Ֆինոդկոմատը վոչ մի պատասխանատվություն չի կրում, նա պատասխանում է միայն քաշի պակասորդի համար:

2. Բամբակի ցանքի պարտադիր կոպարային ապահովագրության վնասները անբերրիությունից վճարվում են ինչ պատահարից ել դա առաջացած լինի (կարկտահարությունից, հեղեղից, փոթորիկից, ցրտահարությունից, թացահարությունից, փթումից և այլն), բացի այն դեպքերից, յերբ լրվ կամ մասնակի թերահավաքը (անբերրիությունը) առաջացել է նրանից, վոր ապահովագրվողը (կոլեկտիվ կամ անհատական տնտեսությունը), հնարավորություն ունենալով հանդերձ, չի կատարել տվյալ վայրի համար սահմանված ագրոմինիումը:

3. Բամբակի ցանքի անբերրիությունից առաջացած վնասը վորոշելու համար լուր լուծարքային արձանագրությունները կատարվում են նույն կարգով, ինչպես կարկտահարության վնասների վորոշման ժա-

ժանակ: Սակայն անբերրիությունից առաջացած վնասի դեպքում, պետք է կատարվի տուժած բամբակի դաշտերում նախնական զննում և ապա վնասների վերջնական դնահատում:

4. Նախնական զննությունը կատարվում է հատուկ հանձնաժողովի կողմից մասնակցությամբ՝ ապտեսչի, շրջադաշտատեսի, դյուղատես-տես-մասնագետի, ապահովագրությունների լիազորի, դյուղորհառուղի նախագահի, կոլտնոցի ներկայացուցչի և չահագործված հիմնարկու-թյան ներկայացուցչի:

Մանրաթուքում. — Լուծարքային աշխատանքները պետք է համաձայնեցվեն շրջանային համապատասխան որդանների հետ:

5. Լուծարքային հանձնաժողովը թե նախնական զննման ընթաց-քում և թե վնասի վերջնական վորոշման ժամանակ պարզում է հետև-յալը՝

ա) արմատի վրա մնացած բամբակի դրությունը.

բ) սպառվելիք բերքի չափը.

գ) վնասված և չվնասված բամբակի տարածությունը ըստ տնտե-սությունների.

դ) բամբակի անբերրիության ճիշտ պատճառները.

յ) կատարված և արդյոք ապահովագրողի կողմից ազդումինիմու-մը, և յեթե չի կատարվել, դրա պատճառները:

զ) Բամբակի ցանքսի տարածությունը, վորի նկատմամբ կատար-վել է ազդումինիմումը և վորի նկատմամբ չի կատարվել ազդումինիմու-մը՝ նշել առանձին-առանձին:

6. Լուծարքային հանձնաժողովը դաշտային դիտումից հետո կազ-մում է հատուկ արձանագրություն՝ կցված բլանկի վրա, մանրամասնո-րեն պատասխանելով արձանագրության բոլոր հարցերին: Այդ արձա-նագրությունը կցվում է անբերրիության ձև № 21 ա. ախտին:

7. Ինչպես ընդհանուր կանոն նախնական զննումը կատարվում է դաշտում մինչև բերքի հավաքելը և առանց նախնական զննումի խիստ արգելվում է վնասի չափը վորոշել ու բավարարել:

8. Այն դեպքում, յերբ ազդումինիմումը կատարվել է մի հողամասի նկատմամբ, իսկ մյուս հողամասի նկատմամբ չի կատարվել, այդ դեպ-քում, վնասը չի հատուցվում այն հողամասի նկատմամբ, վորի վերա-բերյալ ազդումինիմումը չի կատարվել:

Որինակ՝ Կոլտնտեսությունն ունեցել է 30 հեկտար բամբակի ցանքս յերկու հողամասում — մեկը 10 հեկտար, մյուսը քսան հեկտար: Կոլտնտեսությունը տասը հեկտար հողամասի ցանքսը չի մշակել, վորի պատճառով առաջացել է անբերրիություն, հետևապես այդ տասը հեկ-տարի նկատմամբ վնասը չի բավարարվում, իսկ քսան հեկտարի նկա-մամբ վնասը բավարարվում է: Լուծարքային հանձնաժողովը այդ դեպքում տեղում պետք է վորոշի տասը հեկտարի բերքի չափը, վոր-

պեսզի վնասի դումարը հաշվելու հնարավորություն լինի դուրս դալ թե տարածությունը և թե նրանից ստացված բամբակի քաշը:

9. Բամբակի բերքի չափը վորոշելիս պետք է նկատի ունենալ տվյալ տնտեսության բամբակի ցանքսի ամբողջ տարածությունը, այլ վոչ թե ըստ առանձին հողամասերի:

Որինակ՝ Կոլտնտեսությունը ցանել է յերկու հողամասում 200 հեկտար բամբակ, վորից 80 հեկտարը մի հողամասում չի վնասվել, իսկ 120 հեկտար վնասվել է մյուս հողամասում:

Առաջին հողամասից բերք է ստացվել 480 ցենտներ (60+80—480), իսկ յերկրորդ հողամասից 600 ցենտներ (5×120=600), ընդամենը 200 հեկտարից ստացված է 1080 ցենտներ, այսինքն պակաս նորմայի չափից 40 ցենտներ (1120—1080): Ուրեմն վնասի չափը հավասար է (40+28 ուրբի 57 կ.) — 1142 ուրբ. 80 կոպ.:

10. Բամբակի բերքը հավաքվում է աստիճանաբար, ըստ նրանց տեխնիկական հատկությունների, այդ պատճառով էլ վնասի չափը վորո-շելու ժամանակ պետք է նկատի ունենալ այդ հանգամանքը:

11. Բամբակի բերքի վերջնական քաշը պարզելու համար, անհրա-ժեշտ է մթերող որդաններից վերցնել պաշտոնական տեղեկանք հանձ-նրված բերքի չափի (քաշի) մասին, ըստ տնտեսությունների, վորպիսի տեղեկանքը նույնպես կցվում է անբերրիության ախտին (ձև № 21 ա.): Առանց այդ տեղեկանքի վոչ մի վնաս չի կարելի վորոշել:

12. Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, վոր բամբակի բերքի վորոշ մասը ցանքսատերերը ոգտագործում են իրենց կարիքների հա-մար, անհրաժեշտ է մթերող որդաններին հանձնված քանակի վրա ա-վելացնել 8-10 տոկոս յուրաքանչյուր տնտեսության նկատմամբ:

Որինակ՝ Մարտիրոսյան Գասպարը մեկ հեկտարից հանձնել է բամբակի դործարանին յերեք ցենտներ, իսկ իր կարիքների համար ոգտագործել է 0,3 ցենտներ 10 տոկոս: Ուրեմն մեկ հեկտարից նա ստացել է բերք 3,3 ցենտներ: Անբերրիության չափը հավասար է 1, 0 ցենտների, իսկ ապահովագրության վարձատրության դումարը կլինի 27 ուրբ. 90 կոպ.:

13. Ֆինրաժինը պետք է ժամանակին բացատրի ապահովագրողնե-րին, վոր նրանք պարտավոր են անհապաղ, համենայն դեպս վոչ ուշ քան յերկու ուրվա ժամկետում, հայանել դյուղխորհուրդներին կամ շրջֆին-րաժիններին իրենց ցանքսերի մեջ տեղի ունեցած ապահովագրական պատահարի մասին (կարկոտահարության, ցրտահարության, հեղեղի, հիվանդությունների և այլն) հակառակ դեպքում վնասը յենթակա յե ձերժման (կանոնների § 16-ը):

14. Շրջֆինրաժինը բամբակի ցանքսերի դաշտային լուծարքան աշխատանքները պետք է ավարտի վոչ ուշ, քան նոյեմբերի մեկը, վոր-

րովհետև այդ որմանից Ֆինտոլկոմատի պատասխանատվությունը վերջանում է (տե՛ս Կանոնները § 13-ը) :

15. Աչքի ոտաջ ունենալով բամբակի լուծարքային աշխատանքները բարձրագույնը, չըջինքաժինը պետք է այդ աշխատանքներին մասնակից դարձնի զյուզի և չըջանի ամբողջ ախտիվը :

Շըջինքաժինը բամբակի լուծարքանին աշխատանքներում կրում է խոշոր պատասխանատվություն :

§ 39. Բոլոր հատուկ մշակույթների դիտումը և լուծարքի յենթարկումը պետք է կատարի համապատասխան մասնագետների մասնակցությամբ : Յեթե մասնագետ չկա, ապա նրան փոխարինում է զյուզատերները :

§ 40. Լուծարքային արձանագրությունները փաստացի ստուգման են յենթարկվում Ֆինտոլկոմատի կողմից և հետևյալ դեպքերում՝

ա) յեթե կարկտահարվել են զգալի տարածություններ ու մասնավորապես դերձերում, յերբ կարկտահարությունն ունեցել է բծային բնույթ (կարկտահարված և տեղ-տեղ) :

բ) վնասների զգալի տոկոս կազմելու դեպքում :

դ) բոլոր այն դեպքում, յերբ առաջանում են տարակուսանքներ փաստաթղթերի ստուգման ժամանակ :

զ) Լուծարքային մասնակցողների կամ տուժող ապահովագրվողների անհամաձայնության դեպքում, յերբ այդ տարածությունները կամ բողոքները մտցված են լուծարքային արձանագրության մեջ :

յե) Ըստ կարելույն բոլոր դեպքերում պտղատու այգիների, խաղողի այգիների վնասների գնահատման նկատմամբ, սակայն անպայման այն դեպքում, յերբ այդ գնահատումը կատարված է յեղի առանց մասնագետի մասնակցության :

զ) Անպայման ստուգման յենթակա յեն շտապ լուծարքի բոլոր այն դեպքերը, յերբ շտապ լուծարքի պատճառը լինում է ապահովագրողների հայտարարությունը կրկնացան կատարելու ցանկության մասին, վերստին յեթե ապահովագրողը թողնի կարկտահարությունից վնասված ցանքը արժատի վրա, բերքը ոգտագործելու նպատակով, կատարման կրկնակի լուծարք կատարելու անհրաժեշտություն :

### ԼՈՒԾԱՐՔԱՅԻՆ ԱԿՏԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՍՏՈՒԿՈՒՄՆ

§ 41. Լուծարքային արձանագրությունների փաստացի ստուգման նպատակն է՝

ա) ստուգել կարկտահարության փաստը, վոր մասնանշված է լուծարքային արձանագրության մեջ :

բ) Ստուգել կարկտահարված այն տարածությունը, վոր ցույց է տրված լուծարքային արձանագրության մեջ :

դ) Ստուգել, թե ճիշտ է հաշվված և վորոշված վնասների չափերը (տոկոսները) :

§ 42. Յեթե փաստացի ստուգման կիրառումը հանդիպում է արգելքի՝ բերքահավաքը մասամբ ավարտելու հետևանքով, ախուամենայնիվ չպետք է հրաժարվել ստուգումից, այլ ընդհանրապես պետք է ոգտվել զոնե կողմնակի տեղեկություններով՝ վնասված տարածության և վնասի տոկոսի մասին տվյալներ ունենալու համար :

Վարպես տեղեկութուններ կարող են ծառայել՝

ա) Կարկտահարված հողումասի և այդտեղ բանող մուլախտերի դիտումը, վորոնք կրում են կարկտահարության հետքերը, կարող են ծառայել վորպես՝ կարկտահարության փաստ և ցույց տալ պատճառած վնասի տոկոսը :

բ) Ապահովագրվողների կողմից Փին. բաժ. ներկայացված դիմումներ զյուզհարկը զիջելու մասին :

Հողամասերի դիտումը, վորտեղ դեռ մնացել է չհավաքված բերք :

գ) Հողամասերի դիտումը, վորտեղ կարող են դեռ մնացած լինել թափված հատիկներ, յեթե կարկտահարությունը տեղի յե ունեցել հացահատիկների հասունացած ժամանակաշրջանում :

յե) կարկտահարված դաշտի խորձերի հացահատիկի կախումը և այլն :

### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 43. Դրույքային ապահովագրության ընդհանուր կանոնների համաձայն, ապահովագրական վարձատրությունը պետք է վճարվի ապահովագրողներին վոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում՝ լուծարքային արձանագրությունը կազմելու օրից :

Այդ իսկ միատնայն լուծարքային արձանագրությունները հաստատելու իրավունքը վերապահված է չըջանային գործկոմին և չըջինքաժին :

§ 44. Լուծարքային արձանագրությունների վրա ապահովագրվողները պարտավոր են տալ ստորագրություն՝ ապահովագրական վարձատրությունն ստանալու մասին :

(Տես չըջաբերական № 59, 1932 թ.) :

§ 45. Շտապ լուծարքի վարձատրությունը վճարելուց առաջ, անհրաժեշտ է տեղում ստուգել, հարցաքննել ապահովագրողներին և տեղական իշխանության ներկայացուցիչներին՝ տեղի՞ յե ունեցել արդյոք հացահատիկի կրկնացան՝ վաղ կարկտահարության հետևանքով : Յեթե պարզվի, վոր տնտեսական նկատառումներով ապահովագրվողները գերադասել են վնասված ցանքերը թողնել և սպասել բերքին, այդ դեպքում վարձատրության վճարումը հետաձգվում է :

րովհետեւ այդ որմանից Փինժողկոմատի պատասխանատվութիւնը վերջանում է (տեւ. կանոններէ § 13-ը) :

15. Աւելի առաջ ունենալով բամբակի լուծարքային աշխատանքներէ բարդութիւնը, չըջֆինքստիւնը պետք է այդ աշխատանքներին մասնակից դարձնի գյուղի և շրջանի ամբողջ ազգային :

Երջֆինքստիւնը բամբակի լուծարքանին աշխատանքներում կրում է խոշոր պատասխանատվութիւն :

§ 39. Բոլոր հատուկ մշակույթների դիտումը և լուծարքի յենթարկումը պետք է կատարի համապատասխան մասնագետների մասնակցութեամբ : Յեթե մասնագետ չկա, ապա նրան փոխարինում է գյուղատեղեւոր :

§ 40. Լուծարքային արձանագրութիւնները փաստացի ստուգման են յենթարկվում Փինժողկոմատի կողմից և հետեւյալ դեպքերում՝

ա) յեթե կարկտահարվել են զգալի տարածութիւններ ու մանաւանդ այն դեպքերում, յերբ կարկտահարութիւնն ունեցել է բծային բնույթ (կարկտահարված և տեղ-տեղ) :

բ) վնասների զգալի սոկոս կազմելու դեպքում :

գ) բոլոր այն դեպքերում, յերբ առաջանում են տարակուսանքներ փաստաթղթերի ստուգման ժամանակ :

դ) Լուծարքային մասնակցողներին կամ տուժող ապահովագրվողների անհամաձայնութեան դեպքում, յերբ այդ տարածութիւնները կամ բոլորները մտցված են լուծարքային արձանագրութեան մեջ :

յե) Ըստ կարելույն բոլոր դեպքերում պտղատու այգիների, խաղողի այգիների վնասների գնահատման նկատմամբ, սակայն անպայման այն դեպքում, յերբ այդ գնահատումը կատարված է յեղել առանց մասնագետի մասնակցութեան :

զ) Անպայման ստուգման յենթակա յեն շտապ լուծարքի բոլոր այն դեպքերը, յերբ շտապ լուծարքի պատճառը լինում է ապահովագրողների հայտարարութիւնը կրկնացան կատարելու ցանկութեան մասին, վերոյհետեւ յեթե ապահովագրողը թողնի կարկտահարութիւնից վնասված ցանքը արմատի վրա, բերքը ոգտագործելու նպատակով, կատարանա կրկնակի լուծարք կատարելու անհրաժեշտութիւն :

### ԼՈՒԾԱՐՔԱՅԻՆ ԱՎՏԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

§ 41. Լուծարքային արձանագրութիւնների փաստացի ստուգման նպատակն է՝

ա) ստուգել կարկտահարութեան փաստը, վոր մատնանշված է լուծարքային արձանագրութեան մեջ :

բ) Ստուգել կարկտահարված այն տարածութիւնը, վոր ցույց է տրված լուծարքային արձանագրութեան մեջ :

գ) Ստուգել, թե ճիշտ է հաշվված և վորոշված վնասների չափերը (տոկոսները) :

§ 42. Յեթե փաստացի ստուգման կիրառումը հանդիպում է արգելքի՝ բերքահաշիւը մասամբ ավարտելու հետեւանքով, այնուամենայնիվ չպետք է հրաժարվել ստուգումից, այլ ընդհանրապէս պետք է ոգտովել գոնե կողմնակի տեղեկութիւններով՝ վնասված տարածութեան և վնասի տոկոսի մասին տվյալներ ունենալու համար :

Վորայես տեղեկութիւններ կարող են ծառայել՝

ա) Կարկտահարված հողամասի և այդտեղ բանող մուլախտերի դիտումը, վորոնք կրում են կարկտահարութեան հետքերը, կարող են ծառայել վորպէս՝ կարկտահարութեան փաստ և ցույց տալ պատճառած վնասի տոկոսը :

բ) Ապահովագրվողների կողմից Փին. բաժ. ներկայացված դիմումները գյուղհարկը զիջելու մասին :

Հողամասերի դիտումը, վորտեղ դեռ մնացել է չհավաքված բերք :

գ) Հողամասերի դիտումը, վորտեղ կարող են դեռ մնացած լինել թափված հատիկներ, յեթե կարկտահարութիւնը տեղի յե ունեցել հացահատիկների հասունացած ժամանակաշրջանում :

յե) կարկտահարված դաշտի խուրճերի հացահատիկի կախումը և այլն :

### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 43. Դրույքային ապահովագրութեան ընդհանուր կանոնների համաձայն, ապահովագրական վարձատրութիւնը պետք է վճարվի ապահովագրողներին վոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում՝ լուծարքային արձանագրութիւնը կազմելու օրից :

Այդ իսկ միտածառով լուծարքային արձանագրութիւնները հաստատելու իրավունքը վերապահված է շրջանային գործկոմին և շրջֆինբաժնին :

§ 44. Լուծարքային արձանագրութիւնների վրա ապահովագրվողները պարտավոր են տալ ստորագրութիւն՝ ապահովագրական վարձատրութիւնն ստանալու մասին :

(Տես շրջաբերական № 59, 1932 թ.) :

§ 45. Շտապ լուծարքի վարձատրութիւնը վճարելուց առաջ, անհրաժեշտ է տեղում ստուգել, հարցաքննել ապահովագրողներին և տեղական իշխանութեան ներկայացուցիչներին՝ տեղի յե ունեցել արդյոք հացահատիկի կրկնացան՝ վաղ կարկտահարութեան հետեւանքով : Յեթե պարզվի, վոր անտեսական նկատառումներով ապահովագրվողները գերադասել են վնասված ցանքերը թողնել և սպասել բերքին, այդ դեպքում վարձատրութեան վճարումը հետաձգվում է :


Լուծարքային ակտի մեջ նշանակվում է վարձատրության վճարումն  
հետաձգելու մասին (տես չրջաբերական № 59, 1932 թ.):

Համատարած լուծարքը կատարելիս այդ կարկտահարության փաս-  
տերը նորից են դիտվում ու քննության առնվում և լուծարքը կատար-  
վում և ընդհանուր կարգով:

Մյուս բոլոր դեպքերում կիրառվում է չրջաբերական № 59, 1932  
թ. վարձատրության վճարման համար սահմանված կարգը:

Ապահովագր. սեկտորի ղեկավար՝ ՄԵԼԻՔՆՅԱՆ

10 ապրիլի 1932 թ.  
Յերևան.



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
Դլավիտ 7402 (Բ)  
Պատկեր 1731  
Ցիքաժ 2000

Արագրեցին՝ Լ. Սառիկյան յեվ Ա. Ճուղուրյան

Հանձնված է արտադրության մայիսի 15-ին 1932 թ.  
Ստորագրված է ապրիլի 22-ին 1932 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0211341

44. 256

2320

10